ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հոկտեմբերի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ՍԻՆԳԼ ԳՈՌ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի հուլիսի 21-ի №267Ա որոշմամբ (այսուհետ՝ №267Ա որոշում) երկարաձգվել է «ՍԻՆԳԼ ԳՈՌ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված «Սանդաղբյուր» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0212 լիցենզիայի ժամկետը, իսկ որոշման 3-րդ կետով Ընկերությունը պարտավորեցվել է վեցամսյա ժամկետում՝ մինչև 2022 թվականի հունվարի 22-ը, Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած՝ Կայանի ճշգրտված ելքերով և ջրառի ու ջրահեռացման նիշերով նախագիծը (նախագծի փոփոխությունները)՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ, որոնցից և ոչ մեկը չի ներկայացվել,

բ) Հանձնաժողովը №267Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար 2022 թվականի մայիսի 11-ի №200-Ա որոշմամբ (այսուհետ՝ №200-Ա որոշում) Ընկերությանը նախազգուշացրել է և №267Ա որոշման 3-րդ կետով սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով՝ մինչև 2022 թվականի հուլիսի 22-ը, սակայն Ընկերության կողմից տվյալ կետով սահմանված պարտավորությունը դարձյալ չի կատարվել,

գ) համաձայն «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված ծանուցագրի՝ №ADLE0103646604AM գծանիշ կոդով առաքանին (№200-

Ա որոշման պատճենը) Ընկերությանը հանձնվել է 2022 թվականի մայիսի 16-ին, ուստի №200-Ա որոշումը նույն թվականի մայիսի 17-ին մտել է ուժի մեջ և 2022 թվականի հուլիսի 17-ից դարձել անբողոքարկելի,

դ) Հանձնաժողովը 2022 թվականի հուլիսի 28-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ №267Ա որոշման 3-րդ կետով սահմանված պարտավորության խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

ե) Ընկերությունը վարչական վարույթի շրջանակում քննարկվող հարցի առնչությամբ փաստարկներ և հիմնավորումներ չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը №200-Ա որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին խախտել է №267Ա որոշման 3-րդ կետի պահանջը, այն է՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել Նախագիծը, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումները, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 10-րդ մասերը և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. №267Ա որոշման 3-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը տուգանել 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ գումարի չափով:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում սույն որոշման 1-ին կետով ամրագրված գումարը №900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Նախագիծը, իսկ դրա անհրաժեշտության բացակայության դեպքում՝ համապատասխան հիմնավորումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
հոկտեմբերի 2022թ.